ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» հունվարի 2024 թ. N 2-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 147-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-49-Ն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հունիսի 16-ի N 647-Ա որոշման հավելվածի 25-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 147-Ա/1 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ գլխի վերնագրում «հրապարակման ոչ ենթակա» բառերը փոխարինել «սահմանափակ տարածման ծառայողական» բառերով.

2) 104-րդ և 106-րդ կետերում ««Հրապարակման ոչ ենթակա» դրոշմագրով» բառերը փոխարինել ««Ծառայողական օգտագործման համար» նշումով» բառերով, իսկ 105-րդ

կետում ««Հրապարակման ոչ ենթակա» դրոշմագիրը» բառերը փոխարինել ««Ծառայողական օգտագործման համար» նշումը» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 28-ից:

1/9/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ